

ԽԱՂԱՂԱՍԵՐ ԱՌԱՆՇԱՀԻԿՆԵՐԸ ՀԱՅՈՑ
ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Չկա ավելի վեհ ու պատասխանատու միսիա, քան խաղաղությունը պաշտպանելն ու նրա ամրապնդման համար միջոցների ձեռնարկումներն են՝ հանուն ներկա և գալիք սերունդների, հանուն պատերազմներից զերծ աշխարհի կառուցման: Դարերի փորձը համոզում է, որ բռնակցված ցանկացած տարածք իր էթնիկ տերերով (ազգություն, բնակչություն), որևէ բռնապետության ենթարկված լինելու պայմաններում առաջացնում է պայթյունավտանգ իրադրություն: Ուստի, բռնապետությունից ազատագրումը մեծ դեր ունի տվյալ տարածաշրջանի խաղաղության և ժողովրդավարության սկզբունքների ներդրման համար:

Հարեթյան Հայկ նահապետի ժառանգ Սիսակից սերված Առանը, որ Հայոց արևելից կողմում նշանակված էր կուսակալ և երկիրն էլ իր անունով կոչվում էր Առանք, հայտնի էր իր բարի, խաղաղասեր ու քաղցր բնավորությամբ, և նրան կոչում էին «Աղու Առան», երկիրն էլ՝ «Աղու Առանք», որի մեջտեղում դժվարահունչ առ-ը ժամանակի ընթացքում սղվում է և մնում Աղուանքը: Առանշահ նախարարական-թագավորական տոհմի հիմնադիր Աղու Առան տիրակալին հատուկ բարեմասնություններն ու մարդկային հատկանիշները ներկայացնում է պատմահայր Մ. Խորենացին, նրան բնութագրելով «այր անվանի, առաջինը բոլոր մտավորական և հանճարեղ գործերում», իսկ նրա տոհմը՝ «մեծ ու անվանի», որ ժառանգեց մինչև Կուր գետի վերին հոսանքը, ուր հայերեն խոսքի սահմանն էր - «զեզերք հայկական խոսիցս»¹:

Ժառանգական բարեպաշտությունն ու խաղաղասիրությունը, որպես բարոյական կատեգորիաներ, կրում էին նախ իրենք՝ Առանի տի-

¹ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, գիրք II, գլ. Ը:

րակալները, ապա հաստատում երկրում՝ քաջ գիտակցելով, որ հարազատ ժողովրդի նկատմամբ հոգատարությունն ու արդարադատությունը, օրենքի առաջ իրավահավասարությունն ու պատասխանատվությունը, ազգային արժեքների ստեղծումն ու պահպանումը, ուժեղ բանակը հիմք են երկրի պաշտպանության, որով էլ՝ երկրում խաղաղության պահպանման: Իսկ ամենազլխավորը՝ աստվածապաշտության և հայրենասիրության գաղափարով հայ սերնդի դաստիարակությունն է, որով ուղղորդվում էին Առանշահիկները:

Ազգայնամոլության և շովինիզմի հասկացությունը այդպես էլ նրանց համար մնացին խորթ և անուղելի: Դա է հավաստում նրանց տիրապետության տակ գտնվող բազմաթիվ տարբեր ցեղերի առկայության իրավահավասարության պայմանների հաստատումը ի սկզբանե՝ խոհեմ և իմաստուն Առանից սկսած: Նրանք խաղաղությամբ ընդունում էին տարբեր ցեղերի մուտքը Առանք ու ժամանակի ընթացքում այդ հետամնաց ցեղերը յուրացնում էին քաղաքակրթության տարրերը:

Ազգամիջյան, միջպետական և խաղաղարար հարաբերությունների ներդաշնակ զարգացման, ժողովրդավար պետության կառուցման առաջընթացի ամենակարևոր գործոնը **Աստծո կենսական ճշմարտության հաստատումն է երկրի վրա**, որը պայմանավորված է՝ աշխարհաքաղաքական հարաբերություններում ազգերի ժառանգական առաքելությունների ու իրավունքների, քաղաքակրթությունների գիտակցված արժևորումներով:

Առանշահերի փայլուն ու պայծառ աստղաբույլի մեջ դժվար է առանձնացնել և գերապատվություն տալ հայրենասիրությամբ ու բարեպաշտությամբ իրար չզիջող հոգևոր ու աշխարհիկ տերերից որևէ մեկին, քանի որ յուրաքանչյուրն անձնուրաց նվիրվածությամբ է վարել իր իշխանությունը՝ ելնելով ժամանակի քաղաքական իրադրություններից: Պարզապես հարկ է նշել պետական-վարչական և մշակութային մշանակության բացառիկ անհատականությունների շարք համալրող օրինակներ, որոնց պատմությունը պահպանել է պատմիչ Մովսես Կաղանկատվացին:

ՌԻՈՆԱՅՐ ԱՐՔԱ, որն առաջինն ընդունեց քրիստոնեական մկրտությունն Առանում Գր. Լուսավորչից, երկրում հաստատեց կարգ ու կանոն, մերժեց կամայականությունն ու բարձրացրեց ճշմարտության գաղափարը, նրա խնդրանքով Լուսավորչի թոռ Գրիգորիսը ձեռնադրվեց

Առանքի առաջին քրիստոնյա առաջնորդ, ժողովուրդը նրան անվանում էր «տիրող լույսի որդի»¹:

V դ. 80-ականներից Հայոց Արևելից կողմում ստեղծվեց Հայոց թագավորության բեկորը՝ Առանշահիկ թագավորությունը՝ դառնալով հայոց պետականության առանցքը: Այդ թագավորության գահակալն էր **ՎԱՉԱԳԱՆ ԲԱՐԵՊԱՇՏԸ** (487-510 թթ.): Նա վերացրեց Հայրենիքի հզորացմանը խանգարող երևույթները, ստեղծեց այն «Սահմանադրություն կանոնականը», որի 21 կանոնով ամրացավ պետականությունն ու երկրում հաստատվեց խաղաղություն, կառուցեց տարվա օրերի թվով եկեղեցիներ: Բարեպաշտ թագավորը «սահմանադրության» կանոններով ընդգծված պահանջ էր ներկայացնում «աշխարհիկ տերերի պարտականություններն ու իրավունքները երկրի կառավարման և օրենքի պահպանման գործում»²: Անզիջում դատ ու պատիժ կիրառելով երկիրը քայքայող աղանդների նկատմամբ, արդարադատ թագավորը հոգատարությամբ դպրոցներ էր բացում նաև այդ աղանդավորների երեխաների համար, քանի որ երկրի ապագան ապահովվելու միջոցը նա տեսնում էր հասունացող սերնդի կրթության ու աստվածապաշտ դաստիարակության մեջ:

Հավասարությունն ու արդարությունը որպես հասարակական բարոյական կատեգորիաներ, հիմնարար տեղ գրավեցին նրա ստեղծած կարգ ու կանոնի մեջ, որով ամենաամօրեն վարքով ապրողներն անգամ, լինի հոգևոր դասի ներկայացուցիչ, իշխանավոր, թե հասարակ գյուղացի, հավասարապես պատասխանատու էին օրենքի առջև: Ահա այդ սկզբունքով էր ղեկավարում Վաչագան թագավորը, համաձայն իր «սահմանադրական կանոնականի», որն ընդունվեց V դ. վերջում և VI դ. սկզբին, Աղվենի ժողովում: Թագավորն օրենքների ստեղծմանը մասնակից էր դարձրել ոչ միայն աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների բարձր ներկայացուցիչների ու բարձրախավ ազնվականների, այլև շինականների: Համաժողովրդական այդ երևույթը բեկում առաջացրեց նորաստեղծ թագավորության հասարակական-քաղաքական կյանքում: Բոլորը գոհ էին իրենց վիճակից, համերաշխ էին, պաշտում էին թագա-

¹ Մովսես Կաղանկատվացի, «Պատմություն Աղուանից աշխարհի», Երևան, 1969 թ., էջ 10:

² Բագրատ Ուլուբաքյան, «Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը», Երևան, 2001 թ., էջ 88:

վորին և միասին, խաղաղաբար լծվել էին աշխարհաշինությանը: Եվ այսքանից հետո գալիս ես եզրահանգման. ուրեմն, V դ. հայոց Առանքուն գոյություն ուներ **քաղաքացիական հասարակություն**, որի գոյությունը պայմանավորված էր օրենքի գերակայությամբ, էթնիկական համերաշխությամբ, որով և Վաչագան Բարեպաշտի թագավորությունում ձևավորվեց էթնիկական հավաքականությանը պատկանելու գիտակցում: Ցնցող է այդ ժամանակի համար այն երևույթը, երբ երկրի միապետը զբաղված էր բոլոր խավերի նկատմամբ հոգատարությամբ: Եվ,

- Ը կանոնով ծանրագույն պատիժների վճիռներ կայացնում էր միայն թագավորը:
- Դ կանոնի համաձայն, շինականից հարկը գանձվում էր ըստ կարողության և չունեցողը չէր վճարում:

Բարեպաշտության ու խաղաղասիրության նոր որակ է ներկայացնում Վաչագան Բարեպաշտի ուղիղ ճյուղը շարունակող ժառանգը՝ XIII դ. Առանք երկրի մի մասի՝ Արցախի «թագավոր», «ինքնակալ արքա» **ՀԱՍԱՆ ՋԱԼԱԼ ԴՈԼԱՆ**, որն իր անվանումը ստացել է արաբներից, բարձր մարդկային հատկանիշներ խորհրդանշելով. ՀԱՍԱՆ-գեղեցիկ, ՋԱԼԱԼ-փառք, վեհություն, մեծություն, ԴՈԼԱ-հարստություն, պետություն, իշխանություն: Մեծ մարդասեր ու աստվածապաշտ, հայրենիքի նվիրյալ Հասան Ջալալը կատարեց մոնղոլների պահանջը և իր ժողովրդին կոտորածից փրկելու համար զոհեց իր Ռուզուքան դստերը, նրան կնության տալով զորապետ Չարմաղանի որդի Բորա Նոյինին: Նա խոհեմաբար բարեկամության ու խաղաղության դաշինք հաստատելով թշնամու հետ, հայրենի երկիրը պահեց իր ձեռքում: Վաչագան Բարեպաշտի այս ժառանգը նույնպես կատարեց անուրանալի և ցնցող արարք. ժողովրդի վրա ծանրացած օտար ասպատակիչների ծախսերը և անվճարունակ աղքատի հարկը վճարում էր ինքը՝ նրանց փրկելով սարսափելի պատիժներից: Հասան Ջալալի խաղաղասիրական ու խոհեմ դիվանագիտական հոգածության ուղորտում էին նաև Արևելյան Հայաստանի մյուս երկրամասերը, ինչպես նաև Հայկական Կիլիկիան: Նա հոգատար էր Վրաստանի նկատմամբ, որի արքայատան հետ ուներ ազգակցական-բարեկամական կապեր և գլխավորելով հայոց ուժերին, 1260 թ. Դավիթ թագավորի հետ կազմակերպեց ապստամբական շարժում, կալանավորվեց ու հավատքին չդավաճանելու համար հողակոտոր արվեց Ղազվինում, 1261 թ.:

Պատմական նկարագրությունների մեջ հենց առաջին նախադասություններից է՝ «խաղաղասեր իշխան էր Դիզակի տեր **ԵՍԱՅԻ ԱԲՈՒ ՄՈՒՍԵՆ** (Մովսեսի հայր Եսայի, VIII-IX դդ.): Սակայն իրեն պարտադրված պատերազմներից միշտ էլ դուրս է եկել հաղթանակով»¹: Գուցե կարելի է բավականանալ այսքանով, եթե չլիներ արաբ բռնակալ Բուղայի հպատակվելու առաջարկությանը տված մեծ նշանակության արժանապատիվ հայի պատասխանը, որն ունի ազգային քաղաքական-մշակութային արժեք: Այդ պատասխանով կարծես ներկայացվում է Հայկի ժառանգների քաղաքակրթության գերակայությունը Հայկական լեռնաշխարհում ու նրա նշանակությունը աշխարհաքաղաքական զարգացումներում, հայ տիրակալների կողմից տարբեր երկրներում կառուցողական մշակութային-շինարարական գործունեությունը և ազգային առաքինությունները՝ որպես չափանիշ՝ իր հողում խաղաղ ապրող մարդու ըմբոստությունն ու անհանդուրժողականությունը նվաճողի դեմ. «Աշխարհակալների կարգն է՝ իրենց հպատակների երկիրը զնալ խնամակալությանը, իբրև խնամարկուներ վերացնել տառապալների նեղությունները և ոչ թե երկիրն ավերել ավազակաբար և ամայացնել սրով ու գերությամբ: Արդ, թող հայտնի լինի, որ ինչքան իմ գորությունը բավականանա և կենդանի լինեն, դեմ կկանգնեն տեր աստծո ուժով և զորությամբ, զնա՛ այստեղից, հեռացիր մեր սահմաններից: Եթե, ինձնից հեռանաս, կլինի խաղաղություն, իսկ եթե ոչ՝ պատերազմ, կռիվ ու ճակատամարտ. դու կդառնաս ոսոխ «պատերազմը քոնը կլինի, իսկ հաղթանակը՝ մերը»²: «Հեռացիր խաղաղությամբ», - ժամանակի հերոսի խոսքերի ազդեցության տակ, բարբարոսը մեղմանում է և ընտրում այն ճանապարհը, որով հաղթում են հերոսին՝ խարդավանքը. խաղաղության բանակցություններ վարելու պատրվակով, Բաղդադի խալիֆի կողմից Եսայի Աբու Մուսեն ու բազմաթիվ հայ իշխաններ հրավիրվում են, ձերբակալվում և ուղղարկվում տաժանակրության:

ԳՐԻԳՈՐ ՀԱՄԱՍ (ՀԱՄԱՍ ԲԱՐԵՊԱՇԵՏ) թագավոր, որը վերականգնեց Առանի կամ Աղուանքի թագավորությունը նաև Կուրի մյուս ափում, Կամբեճան գավառում: Կառուցել է Հավքախաղաց բերդը: 893 թ. բարձր

¹ **Բագրատ Ուլուբաբյան**, «Արցախի պատմություն», Երևան, 1994 թ., էջ 44:

² **Թովմա Արծրունի**, «Պատմութիւնն տանն Արծրունեաց», ՍՊբ, 1887 թ., էջ 178-179 (աշխարհաբար շարադրությունը Բագրատ Ուլուբաբյանի):

վճարներով արաբ ասպատակիչներից ազատել է երկաթե կապանքներով գերված Հայոց կաթողիկոս Գևորգ Բ Գառնեցուն և Պարտավից բերելով, մեծարանքներով ճանապարհել Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

ԳՐԻԳՈՐ ԳԱՅԵՐԵՑ ԻՇՆԱՆ – 900-ականների կեսերին նրան հյուրընկալվելով Արդախի (Արցախ) նստավայրում, Հայոց Անանիա Մոկացի կաթողիկոսը գրել է. «Մեծ և փառավոր աստվածապահ և բարեպաշտ», որն սկզբից ևեթ հայտնել էր իր պատրաստակամությունը «բառնալ զխռովութիւն եկեղեցւոյ և միաբանել ի նոյն կարգ և ի կրոնս և ի հաւատ սրբոյ Լուսավորչին. զի որպէս էին հարք մեր, լիցուք և մեք մինչև յյաւիտեան»:

ՍԱՀԱԿ ՍԵՎԱԴԱ, որը մատենագիտական աղբյուրներում ներկայացված է որպես իմաստուն, քաջ ու բարեպաշտ իշխան, գրականության և ուսման հովանավոր: Նա Գարդմանքի, Քոսա և Փառնես գավառների տերն էր, զբաղվում էր լուսավորչությամբ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԵՆԵՔԵՐԻՍԸ Փառիստուն ստեղծեց թագավորություն, որ ճանաչվեց պարսից արքունիքի ու Բյուզանդիայի կայսեր կողմից՝ նրան ուղարկելով «թագ և արքայական ծիրանի»: Թագավորությունը դառնում էր ուժեղ վարչական կազմավորում և նրա նպատակն էր դառնալ հայոց պետության համար ամուր պատվար օտար հարձակումների դեմ:

Ազգատոհմերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գոյություն ունի «զենետիկ դաստիարակություն»՝ ինքնակառուցված ծագումնաբանական հիմքի վրա, որով օժտված են Հայոց իրական պատմության մեջ Հայկ նահապետի սերունդներից ամենաերկարակյացը՝ Առանշահերի թագավորական տոհմը: Այդ զենետիկ ժառանգականության վեհագույն հատկանիշների կրողներից էր նաև Հաթերքի իշխանաց իշխան **ՎԱՆԹԱՆԳ ՄԵԾԸ**, որի պալատում և հովանավորությամբ, օտար և ազգակից իշխանավորների բռնություններից ժողովրդի ծանրացած վիճակի բարելավման, հասարակական հարաբերությունների կարգավորման ու հայ մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների մտահոգությամբ, ստեղծվեց Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»: Վախթանգյան եղբայրներն ու հարազատ բարեկամներ Զաքարյան իշխանապետները ձեռնամուխ եղան օրենքի գերակայության ճանապարհով հզորացնել հայոց երկիրը և խաղաղություն հաստատել:

1197 թ. Վախթանգ Գահերեցը և նրա եղբայրները կառուցեցին

Գոշավանքն ու նվիրեցին վարդապետ Մխիթար Գոշին: Վանքի Տաճարի ներսում փորագրված է. «... ձեռնտուութեամբ բարեպաշտ իշխանի Վախտանգա և նորին զուգակցի Արզուխաթունի, և նորին եղբարցն՝ Սմայատա, Վասակա, Խոյրանա, Գրիգորո, Գրիգորիսի և նոցին զավակացն...»¹: Ահա այս զավակներն էին, որ իրենց ձեռքերի մեջ էին պահում երեք իշխանությունների բաժանված Արցախ Խաչենը, որտեղ համերաշխություն և խաղաղություն պահպանելու համար ենթարկվում էին «իրենց մեջ առավել շրջահայաց ու քաջամիտ իշխանին», «զահերեց էր դառնում քաղաքական ու ռազմական կարողություններով օժտված ժառանգը», «սրանք էին Առանշահիկ թագավորական տոհմից սերվածները և սրանք էին իշխանապետության օրինական ժառանգները», որոնցից էր 1216 թ. միասնական Արցախի թագավոր, Վախթանգ Տանգիկի որդի Յասան Ջալալ Բարեպաշտը, որի անունով էլ տոհմը վերակոչվեց Յասան Ջալալյանք:

Կիլիկիայի Առանշահիկ Յեթումյանների արքայատան վերջին թագավոր Լևոն VI –ի գահազրկումից հետո, հայկական պետականությունը պահպանվում էր Յայոց Արևելից կողմում և վարչաքաղաքական այդ միավորի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունները գտնվում էին Յասան-Ջալալյանների ձեռքում, որոնք, ինչպես նախորդ տարիներին, իշխանապետությունն ստանձնում էին ժառանգաբար, Յայոց անկախությունն ու ինքնավարության իրավունքները պահպանում էին նույնիսկ օտարներին հարկատու լինելու պայմաններում, որի ժամանակաընթացքն ուղեկցվում էր տարբեր վայրիվերումներով:

XV դարից երկիրը սկսեց ավերածություններ կրել թուրքական ցեղերի նվաճումներից: Եվ, Առանշահ Յասան - Ջալալյանները տեր կանգնեցին Յայոց գոյապայքարին:

Նոր գոյապայքարի նոր որակի ձևավորմանը առաջինը ձեռնամուխ եղավ Գանձասարի **ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ** (Խանձքեցի, գահ,՝ 1653-1675 թթ.), ինչը դրսևորվում էր դիվանագիտական **խաղաղ բանակցություններով, Խաչով ու սրով**: Յայոց փրկությունը կապելով Ռուսաստանի հետ, Պետրոս կաթողիկոսը Գանձասարից Ռուսաստան օգնության խնդրանքով Ալեքսեյ ցարին ուղարկեց առաջին պաշտոնական գիրը: Դա, ինչպես նշել է Բագրատ Ուլուբաբյանը, առաջին

¹ Դիվան հայ վիճագրության, VI, Երևան, 1977 թ., էջ 64-65:

պաշտոնական գիրն է և սրանից տարիներ հետո էր, որ գրեց նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին, կանոնավոր գրագրությանը կազմակերպեց Առանշահիկ Խաղբակյան – Պռոշյան տոհմից Իսրայել Օրին, իսկ ազատագրական շարժման առաջնորդը և արցախյան գնդերի հրամանատարը դարձավ **ԵՍԱՅԻ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ** կաթողիկոսը¹, որը շարունակեց իր նախորդների սկսած բարեկամական հարաբերությունները ռուսական արքունիքի հետ և ամբողջ կյանքն անցկացրեց ժողովրդի համար մաքառելով: Ռուսաստանի հետ հարաբերություններում ազնվագարմ կաթողիկոսը մնաց վեհամձն, շիտակ, հավատարիմ, երբեք չկասկածելով Պետրոս Մեծի, ապա՝ Եկատերինա կայսրուհու վստահեցնող խոստումների ճշմարտացիությանը, որոնք այդպես էլ մնացին անտեսանելի ու այդ վշտերից էլ մահացավ 1728-ին: Այդ հավատարմությանը զոհ դարձան նաև **ՀՈԿՀԱՆՆԵՍ և ՍԱՐԳԻՍ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆՆԵՐ** կաթողիկոսները, **ԴԱՆԻԵԼ ԲԵԿԸ** և այլք:

Իսկ մետրոպոլիտ Բաղդասար Հասան-Ջալալյանի մասին Լեոն գրում է, որ Հայոց եկեղեցու, նրա միասնության ու ավանդական լավագույն կողմերի անխաթար, անաղարատ զարգացման գործիչ էր, իր պարտականությունների ու պաշտոնական դիրքի ճշմարիտ գիտակցությամբ ապրող մարդ:

Առանշահ տոհմի իշխանություն ունեցող համարյա բոլոր ժառանգները նախանձախնդիր նվիրումով էին զբաղվում Հայոց լեզվի խնդիրներին, ընդունելով այն որպես ազգի հարատևման միակ և անքննելի պայման: Դրա վառ օրինակ է Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանի տպագրությունը, որը հիմնականում գրաբար էր՝ «նուրբ ու բյուրեղային լեզվով», «վայելուչ և գեղեցիկ»², - այդպես է գնահատել Լեոն:

Բացահայտ է, որ հայոց լեզվի արցախյան ենթաբարբառի հիմքը գրաբար հայերենն է:

Առան-արցախյան բարբառը լեզվաբանների կողմից համարվում է եզերական լեզուներից ամենամեծը: Սակայն ես չեմ խորանա լեզվաբանական առանձնահատկությունների մեջ. դա զուտ մասնագիտական խնդիր է: Պարզապես մեծ ուշադրության է արժանի Առան-արցախյան հայերենում հիմնավոր տեղ զբաղեցնող «նով» բառի ծագումնաբանու-

¹ **Բագրատ Ուլուբաբյան**, «Արցախի պատմություն», Երևան, 1994 թ., էջ 135:

² **Լեո**, ՊՂԴԹ, էջ 125:

թյունը, որը թե՛ բովանդակային, թե՛ առարկայական, թե՛ արմատական իմաստներով հանգեցնում է նահապետ Նոյին ու նրա կառուցած տապանի իմաստին, որի ուսումնասիրությունը թողնվում է մասնագետներին:

Աստվածաշնչյան տեղեկությունների համաձայն, Նոյը կառուցել է ոչ թե նավ, այլ տապան, որը նավի տեսք ուներ և Նոյը բնակվում էր նրա մեջ՝ ջրերի վրա: Իսկ Նով-ը՝ միստը կամ բնակությունն էր Ամոն աստծու, «քաղաք Արամագոյայ Ամմոնի»¹: Հնարավոր է, որ հետագայում «Տապանը» ստացել է տիրոջ՝ Նոյի անունը՝ «Նով»:

Մեծառանքում (Խաչեն) կա «Նովեր» կոչվող հնագույն մի բնակավայր, որտեղ կա նով: Առան-արցախյան «նով»-ը ունի տարբեր պատկերներում մեզ ներկայացված Նոյյան Տապանի տեսք, պատրաստված է փայտից, տեղադրվում է աղբյուրին կից՝ ջուր հավաքելու համար:

Այսքանից կարելի է եզրակացնել, որ «Նոյ-Տապան-նով-նավ»-երը բոլոր իմաստներով կապված են իրար հետ, որոնք պահպանվել են ավանդաբար՝ իրենց իմաստների մեջ խորհրդանշելով Նոյ նահապետին: Իսկ ավանդականի պահպանումը Առանի տերերի համար ժառանգաբար փոխանցվող սրբազան պարտականություն է:

Ուսումնասիրությունները գալիս են հաստատելու, որ Առանը կուսակալ էր նշանակված մի տարածքի վրա, որտեղ հայերեն գրերի ստեղծումից շատ դարեր առաջ գոյություն ուներ գրաբար հայերենով խոսակցական լեզու, որի պահպանմանը նվիրված էին Առանշահերը, և որը տարածված լինելով Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան կողմում, վերջին եզերքը Կասպից կամ Վրկանա ծովն էր՝ «զեզերք հայկական խոսիցս»:

Ինչպես մարդկային, նույնպես և միջպետական հարաբերություններում, արդարությունն է բարոյական դրսևորումների չափանիշը: Առան-Արցախի պարագայում, դարեր շարունակ բախվել են երկու անհամատեղելի կատեգորիաներ՝ էթնիկ հայ ազգի քաղաքակրթությունը և ավարառու քոչվոր ցեղերի վայրենաբարո նկրտումները հայոց տարածքների նկատմամբ:

Թուրքական կեղծարարության ոլորտում շահարկվում է Ղարաբաղ

¹ «Բառարան սուրբ գրոց» (Աստվածաշնչի բառարան), Կոստանդնուպոլիս, 1881 թ., էջ 421:

անվանումը, որը XIV դ. շրջանառվել է Առան-Արցախի վրա, սակայն, ի պատիվ հայության գեներտիկ բանականության, Ղարաբաղը այդպես էլ խորթ մնաց մեր ազգային հոգեկերտվածքին:

Այստեղ թերևս բավարարվենք միայն ռուս պրոֆ. Մինորսկու արտահայտությամբ՝ պանթուրքիստ պատմաբանների վարքագծի մասին. «Ուր որ Արևելքի հնադարյան ցեղերի կուլտուրայի բնագավառում գիտական չլուսաբանված խնդիրներ են հայտնաբերվում... թուրքերը անհապաղ իրենց ձեռքը նույն այդ տեղն են պարզում»¹:

Ի թիվս հայոց շատ հուշարձան-կոթողների, 1950-ականներին, թուրքական Ադրբեջանի քաղաքականության զոհ պիտի դառնար Գանձասարի եկեղեցին, որը կանգուն մնաց **ՅՈՎՅԱՆՆԵՍ ԱՍՐՅԱՆԻ** անձնուրաց ու խոհեմ ձեռնարկումների շնորհիվ: Իսկ հայոց սրբատարածք Նախիջևանը, նրա էթնիկ բնակչությունը, հոգևոր-մշակութային օջախները, խաչքարերը, գերեզմանները. այս բոլորը հափշտակվում են ու ոչնչացվում: Եվ սա հասկանալի է. ընդամենը XI դ. դեռ նոր ձևավորվող ազգությունը չէր կարող իր համար թիրախ դարձրած հայոց տարածքների վրա պահպանել այդ տարածքների պատկանելիությունը հաստատող արժեքները: Պարզապես անհասկանալի է, որ այդ վանդալիզմն ընթացք ունի նաև XXI դ.-ում, քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ:

Ընդհանրապես, յուրաքանչյուր ազգի, մարդու սրբությունը սկսվում է իր հողում նախնիների կամ հարազատի շիրիմներից (գերեզմաններից), անցնում ընտանիքով, հանգրվանում Ատժո տանը:

Առանշահիկների գերդաստանների, ժառանգների տապանատները գտնվում են նրանց կառուցված եկեղեցիներում կամ նրան կից առավել աչքի ընկած տարածքում: Գերեզմանները ավանդաբար համարվել են սրբավայրեր և վտանգի պահին զինական ուժերը միշտ պատրաստ են եղել պաշտպանելու այլազգիներից: Իսկ Գանձասարի մասին Գանձակեցին գրում է, որ գերեզմանատունը, որտեղ **«պահ են դրված»** հոխանաբերդի իշխաններն ու նրանց ժառանգները, կոչվում է **«Աստվածափառ տուն»**, իսկ որտեղ գտնվում է՝ **«Սրբավայր Գանձասար»**: Այդ գերեզմանատները այսօր էլ սրբավայրեր են Հասան-Ջալալյան ժա-

¹ Pan-turkism, par Minorsky, dans Encyclopedie de L'Islam, livraison N. P. 924, **Акопов Г. В.**, "Вопросы этногенеза народов Ближнего Востока..." "Известия АН Арм. СССР", 1956 г., N 7, стр. 37.

ռանգների համար և հանդիսանում են քաղաքական մշակույթի պատմական վկաներ: Եվ, նրա դեմ ոտնձգության ցանկացած մտադրություն կընդունվի որպես դիտավորություն, որն արժանի է խիստ պատժի:

Առանշահերը հայրենիքի խաղաղությունը, ազատությունն ու ապահովությունը գտնում էին ներքին միասնության մեջ: Հանձինս նրանց, Առանքը ճանաչվում էր որպես օրինակելի հայկական պետական միավոր, որը նեցուկ էր ոչ միայն ամբողջական Հայաստանին, այլև եղբայրական Վրաստանին՝ քաղաքական զարգացումներում ու պետականության պահպանման խնդիրներում, մշակույթի ակնհայտ վերելքներով:

Արդի ժամանակաշրջանում աշխարհը հագեցած է սուր հակասություններով և դրա դեմ պայքարի միակ միջոցն է՝ պաշտպանել հակամարտությունների, տարածայնությունների խաղաղ կարգավորման սկզբունքն ու խաղաղության այլընտրանք չունեցող գաղափարները և այն տարածել հասարակական տարբեր կարգ ունեցող պետություններում:

Խոշոր պետությունների ու նրանց ղեկավարած միջազգային կազմակերպությունների կողմից ազգային առանձնահատկությունների, կրոնական, մշակութային, քաղաքակրթական ու պատմական ճշմարտությունների ոչ արդար գնահատումը սրում է նույն այդ հակասություններն ու հակադրությունները՝ առաջացնելով թշնամանք երկրների ու ժողովուրդների միջև, որը դառնում է շարունակական այնքան ժամանակ, որքան շարունակվում են կայացվել անարդար վճիռներ: Անարդար վճիռների իրագործման վերջնակետում զոհ են դառնում նաև դրանց կայացնողները՝ պատերազմի սանձազերծմանը ձգտող, մարդկության ճակատագրի հետ անպատասխանատու խաղեր խաղացող իրավասու կամ ոչ իրավասու կառույցներ ու անհատներ:

Ցանկացած տարածաշրջանում, եթե ապահովված է էթնիկ ժողովուրդների ազատությունը, անկախությունն ու ազգային արժանապատվությունը, ուրեմն ապահովված է նաև նրանց համերաշխությունը, որը խաղաղության և միջազգային անվտանգության առաջին բաղադրիչն է: Ահա այդ համերաշխության և խաղաղարար քաղաքականությամբ են իրենց Հայրենիքը՝ Առան-Արցախը, պահել Առանշահիկները և նրանց ժառանգ Հասան-Ջալալյանները: